

8812

88

14-23

15 JUN 2006

Z ԽԱՆԴԱՍՏՈՒՐ

[19 NOV 2010



ՅԵԶՈՎԴՊՈՍԻ
ԿՅԱՆՔԸ

88
Խ-23

ՀԱՅԴԱՍՏԱՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ

1940

88

Խ - 23

պր.

ՀՈՒՍԻԿ ԽԱՆԴԱՄՈՒՐ

126

ՅԵԶՈՎ ՊՈՍԻ ԿՅԱՆՔԸ

(ԸՍՏ ՊԼԱՆՈՒՏԻ)

ՀԱՅՊԵՏՐԱՏ

ՀԼԿՅԵՄ Կ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎՆ

1940

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հունական մեծ առակագիր Յեզովպոսը ծնվել է մեր քվագրությունից վեց հարյուր տարի առաջ. Փոֆր-Ասիայի Փոյուզիա նահանգում: Յեզովպոսի մանկական և պատանեկական տարիների մասին մեզ տեղեկություն չի հասել:

Յեզովպոսի կյանքի պատկեր էն կազմում նրա առակները, վառնալի յեկանքի իմաստությամբ և փիլիսոփայական-խրատական նշանակություն ունեն: Յեզովպոսի առակներով հիացել և այդ առակները հանգավորման է յեկարելել Հին-հունական աշխարհի մեծագույն փիլիսոփաներից Սոկրատեսը:

Լաթոնեսենի և Կոլիովի առակների մի մասը հանդիսանում է Յեզովպոսի առակների զեղարկեսական մեակումը:

Հայկական միջնադարյան առակագիրներ Մխիթար Գոռի և Վարդան Այգեկցու մի շարք սեղծագործությունները նույնպես հիշեցնում են Յեզովպոսի առակները:



1374

40

ЖИЗНЬ ЕЗОПА
СОСТАВИЛ У. ХАНДАМУР
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.

ԹՁԵՐԸ

Մենք գտնվում ելինք հին Հունաստանի Փոյուզիա քաղաքում: Մեծ վաճառական Արքիդեսն իր մրգերի կողովը հանձնեց ստորուկներին և ինքը գնաց բազնիք: Վերադարձավ, յետ պահանջեց կողովը, բայց խիստ զարմացավ, նկատելով, վոր կողովի մեջ վաչինչ չեր մնացել, բացի... մի քանի տերևներից:

— Ո՛վ ե կերել թղերը, ավանակներ,—բղավեց նա, վոտն ուժեղ գետնին խփելով:

— Յեզովպոսը — պատասխանեցին յերկու խորամանկ ստորուկները, վոր պատրաստվել ելին այդ հարցին:

— Այստեղ բերեք այդ ավանակին—կարգադրեց վաճառականը, վոր շատ եր սիրում «ավանակ» բառը, ըստ յերեվոյթին իր և այդ կենդանու միջև յեղած վորոշ նրմանության պատճառով:

— Դ՞ու ես կերել այս կողովի միջի թղերը,— հարցրեց նա, յերբ Յեզովպոսը ներկայացավ:

— Այո, տեր, նրանք շատ համեղ ելին և յեռ Ձեզ խորին շնորհակալութուն եմ հայտնել դրա համար,—ասաց Յեզովպոսը, վոր հիանալի հիշողութուն ուներ:

— Ինչպէս, դու կերար... ավանակ:

Յեզովպոսը վերջին բառի արտասանության տոնից հասկացավ, թե վորքան խիստ եր զայրացել իր տերը:

— Հավատացե՛ք, տեր, Ձեզ հաճուք պատճառելու համար եր, վոր կերա, — պատասխանեց նա այնպիսի հանդըստությամբ, վոր տիրոջ զայրույթն իր գազաթնակետին

հասավ: Այդ աննկարագրելի զայրույթը նրան հնարավորութիւն չտվեց վորեւէ պատասխան գտնել:

— Ա՛հ, ան, ան,—կմկմաց նա:

— Զարմանալի չե՞ս, տեր իմ, վոր մոռացել եք Ձեր տված հրամանը, վորովհետեւ մոտավորապէս յերեք ամիս ե անցել այդ որից:

— Ի՞նչ, յերեք ամիս ե անցեր, յերեք ամսովս պատմութիւնն ես դու պատմում, իսկ ո՞վ կերավ այս թղերը, ավանակ...

— Հավատացե՛ք, տեր, վոր յես վոչինչ չեմ կերել,—ե Յեզովպոսը մի թեթեւ հայացք գցելով մյուս չերկու ըստրուկների կարմրած դեմքերին՝ ամբողջ պատմութիւնը հասկացավ: Վաճառականը ցանկանում եր նրա վրա հարձակվել, բայց նա խուշո տալով նրա հարվածներից, յերկու բռնի ժամանակ խնդրեց իր անմեղութիւնն ապացուցելու համար:

Քիչ հետո նա իր տիրոջ ներկայացավ մի բաժակ տաք ջրով, խմեց ջուրը, մատը տարավ բերանը, սակայն բերնից վոչինչ դուրս չեկավ:

— Հրամայիր, տեր, վոր այս չերկու զրպարտիչներն ել նուշը կատարեն և այն ժամանակ կերեվա, թե ո՞վ եր մեղավորը:

Վաճառականը, հավանելով այս սրամիտ առաջարկը, հրամայեց մյուս չերկու ստրուկներին, վոր նրանք ել տաք ջուր խմեն:

Յերկու զրպարտիչները զողողացող ձեռներով բաժակը տարան իրենց շրթներին և անմիջապէս դուրս տրվեցին թղերը, վոր դեռ չեյին մարսել:

Վաճառականը Յեզովպոսին հրամայեց մերկացնել չերկու ստրուկներին և թարմ ճիւղտներով ձեծել նրանց, սակայն Յեզովպոսն այդ դաժան հրամանը չկատարեց: Նրա համար բավական եր այն, վոր ապացուցեց իր անմեղութիւնը:

Ոգոստոսյան տապ արեւի և վերակացու Ձենասի հայացքների տակ՝ հունական ստրուկները հող են փորում անընդհատ: Նրանք չեն համարձակվում մի պահ իրենց գլուխը բարձրացնել, սրբել ճակտից հոսող քրտինքը: Նրանք փորում են, փորում անընդհատ: Յեվ անա մեկը համարձակվում ե, դեն ե գցում բրիչը: Վերակացու Ձենասն ապտակում ե նրան: Յեզովպոսը, վոր խիստ համբերող եր իր նկատմամբ յեղած անարդարութիւնների հանդեպ, չի կարողանում իր զայրույթը գսպել և բողոքում ե վերակացվի այդ ստոր արարքի դեմ:

Վերակացուն գնում ե կալվածատիրոջ մոտ և կալվածատերը, զայրացած «հանդուճն» ստրուկի վրա, Ձենասին կարգադրում ե նրա հետ վարվել այնպէս, ինչպէս ինքը կց օնկանա:

Ձենասը Յեզովպոսին հանում ե վաճառքի: Յերկուր ժամանակ վոչ-վոր չի գալիս վաճառատեղին: Վերջապէս յերևում ե մի վաճառական, բայց նա մարդ գնելու տրամադրութիւն չունի: Յեզովպոսը, ցանկանալով ազատվել Ձենասից, վաճառականին խնդրում ե, վոր գնի իրեն:

— Ի՞նչ ոգուտ կարելի յե սպասել քեզանից,—հարց ե տալիս վաճառականը,—դու այդ կերպարանքով միայն քեզ տեսնողներին սարսափեցնելու կձառայես:

— Տեր,—պատասխանեց Յեզովպոսը—միթե տանը չարածճի, լալկան յերեխաներ չունես. նրանց լռեցնելու պաշտոնն ինձ հանձնիր. նրանք ինձ տեսնեն թե չե՞ վախից կղողան (ժամանակն ե ասելու, վոր Յեզովպոսը ծագումով հաբեշ եր և նրա անունը հենց Յեթովպիա — Հաբեշտան — բառից եր կազմված: Նա սեւամորթ եր, ցածրահասակ, չաղ և հաստավիղ, բայց չափազանց խելոք, սրամիտ):

— Ի՞նչ տամ, վոր ինձ տաս այս վողորմելի արարածը,— ծիծաղով դարձավ նա Զենասին։

— Յերեք փող,— պատասխանեց Զենասն արհամարհանքով։

— Գրեթե վոչինչ չտվի և գրեթե վոչինչ չստացա— կսկմաց վաճառականը, վճարեց փողը և Յեզովպոսին իր տուն տարավ։

ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՃԱՌՔ

Յեզովպոսի նոր տերը պատրաստվում էր այլ քաղաք հնայու։ Այդ եյին պահանջում առևտրական շահերը։ Յուրաքանչյուր ստրուկ վորոշեց իր տանելիք բեռը, իսկ Յեզովպոսը խնդրեց իրեն ամենից թեթև բեռը հանձնել. պատճառաբանելով, վոր ինքը նոր էր ընդունվել աշխատանքի և սովոր չէ ծանր բեռներ կրելու։ Ընկերները նրան պատվիրեցին, վոր նա իր ցանկացածը վերցնի և խիստ զարմացան նկատելով, վոր նա հացի պարկն ընտրեց. դա ամենից ծանր բեռն էր և մյուս բոլոր ստրուկներն իրար վրա եյին գցում այդ գործը։

— Սրա նման հիմար մարդ չի կարող լինել աշխարհում,— ասում եյին նրանք,— ամենից թեթևն էր ուզում, և ամենից ծանրն ընտրեց։

Յեզովպոսը ստրուկներ, դժվարությամբ վերցնելով հացի պարկը, նրա մեջքի վրա տեղավորեցին։

— Տեսեք, կարճիկ Յեզովպոսն ի՞նչ յեռանդ ունի— հիացմունքով բացականչեց վաճառականը, յերբ տեսավ ծանր բեռան տակ կքած Յեզովպոսին։

... Ամեն մի իջեվանում, որը յերեք անգամ, մարդիկ հացն ուտում եյին մեծ ախորժակով և յերրորդ սրբ, յերբ բոլոր ստրուկները քրանել եյին ծանր բեռների տակ, Յեզովպոսի շալակին վոչինչ չկար ... բացի դատարկ մի պարկից։

Վաճառականը, հասնելով Սսիա, իր բոլոր գերիներին վաճառեց, բացի յերեքից. մնացին մի նոտար, մի յերգիչ և Յեզովպոսը։ Վաճառականն իր բարեկամներից մեկի խորհրդով յերեք ստրուկներին տարավ Սամոս կղզին, այնտեղ վաճառելու։ Բազմամարդ շուկայում այն ժամանակ վրխտում եյին ամեն տեսակի մարդիկ. շուտով յերևաց հույն փիլիսոփա Քսանթոսը։

— Վճռեղացի ես,— հարցրեց նա յերգչին։

— Կապաղովկիացի,— պատասխանեց յերգիչը։

— Ի՞նչ գիտես դու։

— Ամեն ինչ։

Այս պատասխանը լսելով, Յեզովպոսը չկարողացավ իր ծիծաղը զսպել։

Քսանթոսը զարմացած նայեց Յեզովպոսին և, դառնալով վաճառականին, հարցրեց յերգչի գինը։

— Հազար փող,— պատասխանեց վաճառականը։

Այդ գինը թանկ թվաց Քսանթոսին. նա մոտեցավ մյուս գերուն և հարցրեց.

— Դո՛ւ վորաեղացի յես։

— Լյուդացի։

— Ի՞նչ գիտես։

— Ամեն ինչ։

— Ի՞նչ արժի սա,— հարցրեց Քսանթոսը վաճառականին։

— Յերեք հազար փող— պատասխանեց վաճառականը։

Քսանթոսը թթված դեմքով դուրս էր գալիս շուկայից, յերբ վաճառականը կանգնեցրեց նրան և, մատնացույց անելով Յեզովպոսին, ասաց, վոր նա խիստ եժան է։

Փիլիսոփան վոչ մի հայադք չգցեց Յեզովպոսի վրա՝ նրա տգեղության պատճառով։

— Իզուր մի հեռանաք, տեր,— ասաց վաճառականը

Փիլիսոփային,—սա թանկ չե, ընդամենը վաթսուն փող:
— Դու վճարեցիր քեզ,—հարցրեց Քսանթոսը Յեզովպոսին:

— Յես սկամորթ եմ,— պատասխանեց Յեզովպոսը:

— Այդ չե հարցրածս,— վճարեց քեզ քանիսի:

— Մորիցս:

— Յես ուզում եմ իմանալ՝ ո՞ւր ես ծնվել, դու:

— Չգիտեմ, մայրս ինձ չի պատմել, թե ո՞ւր եմ լեւ ծնվել. տանիքի վրա, թե բակում:

Բոլորը ծիծաղեցին այս պատասխանի վրա:

— Իսկ ի՞նչ գիտես դու,— հարցրեց Քսանթոսը:

— Վոչինչ չգիտեմ:

— Ի՞նչ ես ուզում ասել դրանով:

— Առանձնապես վոչինչ. չեմ վոր այս գերիներն առաջին, թե իրենք ամեն ինչ գիտեն — ել ի՞նչ մնաց, վոր լեւ գիտենամ:

Քսանթոսը, հիանալով այս պատասխանի վրա, հարցրեց Յեզովպոսին, թե արդյոք ցանկանում եր, վոր իրեն գնեին:

— Շատ տարորինակ հարց ե այդ,— պատասխանեց Յեզովպոսը,— մարդ չպետք ե իր համոզմունքներին հակառակ բան գործի. յեթե ցանկանում ես գնել՝ բաց քրտակդ և վճարիր, իսկ յեթե վոչ՝ խելոք կաց և ել մի ծիծաղիր:

— Կով ես խոսում, բայց ափսոս, շատ տգեղ ես:

— Փիլիսոփան, տեր Քսանթոս, պետք ե մարդու հոգուն ու խելքին նայի, և վոչ թե մարմնին. թեթևամիտ մարդիկ միայն մարդու արտաքինից են դատում նրա արժանիքը:

Քսանթոսն այս իմաստուն խոսքերը լսելով՝ անմիջապես վաճառականին վճարեց նրա պահանջած գումարը և, դառնալով Յեզովպոսին, ասաց.

— Առաջ շարժվենք:

Բայց շուտով մաքսահավաքներն յեկան և հարցրին, թե ի՞նչ առևտուր ե կատարվել: Առևտուր անողները, վախենալով մաքս վճարելուց, լուռ մնացին:

— Սա վաճառում ե, նա գնում ե, յես վաճառվում եմ— ասաց Յեզովպոսը— իսկ յեթե սրանք շարունակեն լուռ մնալ՝ յես ազատ կլինեմ:

Յերբ մաքսահավաքները գնացին, Քսանթոսը կրկնեց իր «առաջ շարժվելու» հրամանը, բայց Յեզովպոսը նրա ցույց տված ճանապարհի հակառակ կողմը դիմեց:

— Այդ ո՞ւր ես գնում,— հարցրեց Քսանթոսը:

— Առաջ եմ շարժվում,— պատասխանեց Յեզովպոսը:

— Վոչ, դու յետ ես գնում:

— Դուք եք յետ գնացողը, տեր իմ, յես դեպի արեւելք եմ քայլում, իսկ դեպի արեւմուտք քայլեմ իսկապես կնշանակել յետ գնալ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

— Սիրելի Հելլեն, պատրաստիր քո աչքերը՝ մի հրաշալիք տեսնելու:

Այս խոսքերով եր, վոր Քսանթոսը ներս հրամցրեց Յեզովպոսին:

Քնքուշ Հելլենի կարմիր այտերն այս տեսարանի ազդեցութեան տակ դարձան ավելի կարմիր՝ քան իր շրթերունքների ներկը և նա, զայրուլթից ու հուզմունքից դողալով, դարձավ իր ամուսնուն.

— Քսանթոս, յես նկատում եմ, վոր դու այսպիսի տհաճ տեսարանների միջոցով ուզում ես ինձ հեռացնել այս տնից՝ դրա համար ել ահա յես մեկնում եմ անդարձ կերպով:

— Տիկին, ո՞վ ազնիվ տիկին, ինչպե՞ս կարելի յե

ալդարիսի բան կասկածել Քսանթոսից, վոր մի մեծ փի-
լիսոսիա լի: Դու, փոխանակ ջղայնացած նրա տնից հեռա-
նալու, պետք է ուրախ լինես, վոր քո աչքերին միշտ ա-
ռիթ է ներկայանում իրենց զրավիչ հայացքը նրա վրա
ուղղելու,— ասաց Յեզովուսը և Հելենն անմիջապես հան-
դարավեց, ուրախ ժպտաց:

— Տեսնում ես, վորքան շնորհքով է քո արհամար-
հած ծառան,— քաջալերված խոսք վերցրեց Քսանթոսը:

— Նշանակում է յես այնքան ել չնչին մարդ չեմ.
յես կարողացա մի կնոջ խելքի բերել, իսկ դա փոքր բան
չէ:

— Քեզ բերել եմ ինձ ծառայելու, և վոչ թե վիճե-
լու համար,— բղավեց Քսանթոսը տաքացած:

— Յես այդ չգիտեյի, սրանից հետո ի նկատի կու-
նենամ,— պատասխանեց Յեզովուսը խորամանկ ծիծաղով:

ՎՈՍՊ ՅԵՎ ԽՈՋԻ ՎՈՏՔ

ԿԱՄ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Մի օր, յերբ Քսանթոսի մոտ հյուրեր եյին յեկել, նա
ասաց Յեզովուսին.

— Գնա մի լավ վոսպ յեփիր և պտուկի մեջ լցրու
մի կոնք ջուր:

— Շատ լավ, տեր,— պատասխանեց Յեզովուսը և
դուրս յեկավ:

— Յեփվեց,— մի ժամ հետո հարցրեց Քսանթոսը
Յեզովուսին, յերբ վերջինս ներկայացավ նրան:

— Այո, տեր:

Յեզովուսը խոհանոց գնաց և գդալով մի հատիկ
վոսպ բերեց:

Քսանթոսը վերցրեց, կերավ և ասաց.

— Լավ է յեփվել, գնա մնացածը բեր:

Յեզովուսն իր յեփածը բերեց: Քսանթոսը բաց արեց
կափարիչը և ասաց.

— Սա ջուր է, իսկ ուր է հատիկը:

— Կերաք, տեր:

— Կերա՞, յերբ— հարցրեց Քսանթոսը զարմացած:

— Այն ժամանակ, յերբ բերեցի:

— Իսկ յերբ բերեցիր:

— Այն ժամանակ, յերբ կարգադրեցիք:

— Յերբ կարգադրեցի:

— Կարգադրեցիք, բերեցի և կերաք՝ հենց այն ժա-
մանակ, յերբ յեփված եր:

— Ի՞նչ, միայն մի հատ ելիր յեփել:

— Այո, տեր իմ, վորովհետև դուք ասացիք մի լավ
վոսպ յեփիր, յես ել մեկն էյի յեփել: Դուք ասացիք
«վոսպ» և վոչ թե «վոսպեր»:

— Կատարյալ փիլիսոփա, կատարյալ փորձանք—
ասաց Քսանթոսը զայրացած— միթե դու չեիր կարող
տրամաբանել, վոր մի վոսպով չի կարելի կշտանալ:

— Այդ գեպըում կարող եյիք այդպես չկարգադրել և,
բացի ալդ, յես չեմ սիրում տրամաբանությամբ շատ
զբաղվել,— կատարեցի այն, ինչ դուք հրամայեցիք:

— Յենթադրենք, Յեզովուս, վոր լես իսկապես քե-
ջականական սխալ եմ կատարել, բայց միթե մի քերա-
կանական սխալի համար կարելի է այսպիսի խայտառակ
զբություն ստեղծել հյուրերի ներկայությամբ:

— Յենթադրենք, տեր իմ, վոր յես իսկապես մի
խոհարարական սխալ եմ կատարել, բայց միթե խոհարա-
րական մի սխալի համար կարելի լիք տաքանալ աֆնափ,
վոր վոսպի ջուրը սառչի և, բացի այդ, չե՞ վոր այսչափ
ժամանակում հնարավոր եր մի նոր վոսպ յեփել:

Քսանթոսը բաց արեց պտուկը. ջուրն իսկապես տա-

ռել եր, բայց մենք չենք կարող նկարագրել, թե վորքան կեղտոտ եր այդ ջուրը, չենք կարող ասել, թե քանի-քանի տեսակ կենդանիներ ելին զվարճանում նրա մեջ:

— Վնորակից ես լցրել այս ջուրը,—հարցրեց Քսանթոսը:

— Ճահճից, տեր իմ:

— Ճահճից, իսկ ինչու ճահճից:

— Վորովհետեւ դուք չասացիք, վոր անպայման ծառակից լցնեմ:

Քսանթոսը, ցանկանալով վրեժ լուծել Յեզովպոսից, նրան կարգադրեց յերկու խոզ մորթել և վոտքերից խաշ պատրաստել:

Յեզովպոսը խոզը մորթեց, վոտքերը գցեց պտուկի մեջ և ինչ-վոր գործով դուրս գնաց:

Վերադառնալով խոհանոց, նկատեց, վոր վոտքերից յերեքը չկան: Հին աշխարհում անահավատ մարդիկ շատ կային, բայց Յեզովպոսը դրանցից չէր. նրա համար պարզ եր, վոր խոզի վոտքերն առանց իրենց տիրոջ չէին կարող տեղափոխութիւն կատարած լինել, ուստի չեղրակացրեց, վոր դրանք Քսանթոսն եր վերցրել, իր գլխին խաղ խաղալու համար: Նա անմիջապէս գնաց խոզանոց, ախտեղ մենակ մնալով խոզի վոտքերը կտրեց, յերեքը գցեց ամանի մեջ և առանց շփոթվելու ութ վոտքերն ել ճաշարան տարավ, յերե հիանալի կերպով յեփվել ելին:

— Ի՞նչ ե այս,— զարմացավ Քսանթոսը:

— Խոզի վոտք:

— Յես այդ գիտեմ, խոզի մուկ, իսկ ինչու համար ե ութ հատ:

— Ուզում եք ասել, վոր ութից յերեքը հանելու զեպքում հինգ պետք ե մնալ:

— Ի հարկե, հիմար:

— Այդ ճիշտ ե, տեր իմ, բայց հինգի վրա յերեք ավելացնելու զեպքում դարձյալ ութ ե դուրս գալիս:

Քսանթոսը խիստ զայրացավ, բայց շատ ճիշտ եր Յեզովպոսի ասածը:

ԼԵԶՈՒՆԵՐԸ

Մի այլ ուր, Քսանթոսը ցանկանալով ճաշկերույթ տալ ի պատիւ իր աշակերտներին՝ Յեզովպոսին կարգադրեց, վոր գնա աշխարհի ամենից լավ բանը վերցնի շուկայից և մի համեղ ճաշ պատրաստի:

— Շատ լավ, տեր,— ասաց Յեզովպոսը և գնաց:

Ճաշի ժամին յուրաքանչյուր աշակերտի առաջ մի աման լեզու եր դրված:

— Ի՞նչ ե այս,— հարցրեց Քսանթոսը զարմացած:

— Լեզու, տեր իմ:

— Մի՞թե սա ինչ աշխարհի ամենալավ բանը, ապուշ,— բղավեց նա:

— Ասացեք, տեր իմ,— պատասխանեց Յեզովպոսը սառնորեն,— ի՞նչ կա աշխարհում ավելի լավ, քան լեզուն— նրանից են բղխում բոլոր իմաստութիւնները, ճառերը, դասախոսութիւնները, զվարթ յերգերը. նրանով են շինվում քաղաքները, նրանով են մարդիկ արտահայտում իրենց ցանկութիւններն ու զգացումները, նրանով են մարդիկ ձեռք բերում իրենց ցանկացածը:

Բոլոր աշակերտները, նրանց հետ նաեւ Քսանթոսը, հավանութիւն տվին Յեզովպոսի խոսքերին:

— Հիմա, Յեզովպոս, դարձյալ գնա շուկա և այս անգամ աշխարհի ամենալավ բանը բեր մեզ համար,— նոր հրաման տվեց Քսանթոսը:

Յեզովպոսը գնաց շուկա և դարձյալ լեզու բերեց:

Քիչ եր մնում ամբողջ շենքը փուլ գար տիրոջ զայրութից:

— Հանդարտվեցեք, տեր իմ, — խոսք վերցրեց Յեզովպոսը, — Ի՞նչ կա ավելի վատ, քան լեզուն. դրանով կործանվում են ամբողջ պետություններ, դրանով են կատարվում բոլոր սոսերը, հաջողանքները, կեղծիքներն ու բամբասանքները, դրանով են մարդիկ վիրավորակոն խոսքեր ասում միմյանց և դրանով են, վերջապես, թագավորներն արձակում իրենց անարդար հրամանները: Լեզուն, տեր իմ, աշխարհի ամենալավ և ամենավատ բանն է, նայած, թե ինչպիսի բերնի մեջ է գտնվում նա, նայած, թե ով է դրա տերը:

— Զգուշ աչք ծառայից, Քսանթոս, — ձայն տվեց հանկարած մի աշակերտ, — այս ալլանդակը շատ փորձանք կբերի քո գլխին:

— Յեվ այս մարդը, տեր, լեզվով է, վոր անպատվում է ինձ, լեզվով է, վոր փորձում է գտնություն մրտցնել տիրոջ ու ծառայի միջև, — պատասխանեց Յեզովպոսը տաքացած:

— Դու հաղթեցիր, Յեզովպոս — ասաց Քսանթոսն իր գայլուկի վրա գտնվելով:

ՔԱՐԸ

Մի որ Քսանթոսը, ցանկանալով բաղնիք գնալ, Յեզովպոսին կարգադրում է գնալ բաղնիք ու նայել, թե արդյոք շատ մարդ կա այնտեղ:

Յեզովպոսը անից գուրս է գալիս, բայց հանկարծ ճանապարհին նրան կանգնեցնում է քաղաքային գատավորը և հարցնում, թե ուր է գնում նա:

— Զգիտեմ, — պատասխանում է Յեզովպոսը:

Դատավորը զայրացած, իր ստրուկներին հրամայում է նրան բանտ տանել:

— Տեսնում եք, — ասում է Յեզովպոսը, — յես յեր-

բեք իմ մոքից չեյի անցկացնում, թե կարող եմ բանտ առաջնորդվել:

— Նա ճիշտ պատասխանեց, ազատ թողեր նրան, — կարգադրում է դատավորը:

Յեզովպոսը, հասնելով բաղնիք, դռան առաջ նկատում է խոշոր մի քար, վոր դժվարացնում էր յերթևեկություն: Յոթանասուն անցորդների միջից միայն մեկն է մըտածում մի կողմ շարտել բոլորին արգելք հանդիսացող այդ քարը:

— Շատ մարդ կմը բաղնիքում — հարցնում է Քսանթոսը, յերբ Յեզովպոսը տուն է վերադառնում:

— Միայն մի մարդ տեսա, — պատասխանում է Յեզովպոսը:

Քսանթոսը բաղնիք է գնում և տեսնում այնչափ մարդ, վոր իրեն նստյալ կանգնելու տեղ չեր մնում:

Յեզովպոսը մարդ էր համարել միայն քարը մուտքի առաջից վերցնողին, — նրան, ով մտածել էր հասարակությունից ոգտի մասին:

ՏԳԵՏ ՓԻԼԻՍՈՓԱՆԵՐ

— Յեզովպոս, այսօր հունական փիլիսոփաների հավաք է լինելու ինձ մոտ. դռան առաջ կանգնիր և թույլ մի տա վորևէ կողմնակի մարդու ներս մտնել:

Մի որ այս պատվերը տվեց Քսանթոսը Յեզովպոսին:

— Շատ լավ, — պատասխանեց Յեզովպոսն ու դռան առաջ կանգնեց. յերբ վորևէ մարդ էր գալիս՝ նա հարցնում էր — «Շունն ի՞նչ է շարժում»:

Փիլիսոփաները կարծելով, վոր նա իրենց շուն է համարում, վիրավորված, առանց պատասխանի հեռանում էին:

Միայն մի փիլիսոփա յե հասկանում աչք «խորհմաստ» հարցի իմաստը և՛

— Պնչը,— պատասխանում է սառնորեն:

Յեղովպոսը նրան ներս է ընդունում:

Յերբ պայմանաժամից մի ժամ անցել էր, Քսանթոսը յեկավ և հարցրեց, թե ինչու փրկսոփաներին ներս չի ընդունում:

— Վոչ մի փրկսոփա չի յեկել,— պատասխանեց Յեղովպոսը:

— Ի՞նչպես թե չի յեկել, յես անձամբ պատուհանից տեսա, թե ինչպես նրանք վշտացած հեռանում ելին:

— Ճիշտ է, մի քանի հիմարներ յեկան, բայց յես նրանց յետ վերադարձրի:

— Հենց զրանք ելին փրկսոփաները,— ասաց Քսանթոսը զայրացած:

— Դուք ինչպես եք փրկսոփա համարում, տեր, այն մարդկանց, վորոնք չեն կարողանում ասել, թե ինչ է շարժում շունը:

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՏԱՌԵՐ

Մի որ Քսանթոսը, Յեղովպոսի հետ գերեզմանատանը ման դալու ժամանակ, կանգնեց մի շիրմի առաջ, վորի վրա հունական այբուբենով փորագրվել էին հետևյալ տառերը.

Ա. Վ. Տ. Ռ. Ե. Թ. Խ.

— Ի՞նչ են նշանակում այս տառերը,— հարցրեց Յեղովպոսը Քսանթոսին:

— Չգիտեմ,— պատասխանեց Քսանթոսը:

— Իսկ ի՞նչ կտաս ինձ, յեթե այս տառերի զորությամբ գանձ գտնեմ:

— Գանձի կեսը և ազատություն:

Յեղովպոսը չորս քայլ հեռացավ, գետինը փորեց և հանկարծ արևի ճառագայթների տակ փայլեց վոսկու մի շերտ:

— Քեզ չեմ ազատի, մինչև այդ տառերի իմաստը չբացատրես,— ասաց Քսանթոսն ապշած:

— Մտիկ արա,— ասաց Յեղովպոսը և սկսեց բացատրել— Ա. Աբովաս— գնա, Վ. վիժաղա— քայլ, Տ. տեսներա— չորս, Ռ. որիքսաս— փորիր, Ե. եվրիսիս— կգտնես, Թ. թիսավրոն— գանձ, Խ. խհրիսիու— վոսկու:

Քսանթոսն ասաց.

— Յես աշխարհի մեծագուշն հիմարը կլինեյի, յեթե քեզ պես բանիմաց, հնարագետ մի մարդու թողնեյի, վոր նա բաժանվեր ինձանից:

— Յեթե ինձ չազատես՝ կգնամ բյուզանդական թագավորին կտանեմ, վոր այս գանձերն իր համար ելին պահվել:

— Վերտեղից ես իմանում այդ:

— Նույն տառերն են ասում, Ա. արոտոս— տուր, Վ. վասիլի— թագավորին, Տ. Դիոնիսիոս, Ռ. ոն—ինչ, Ե. եվրես— գտար (Թ. թիսավրոն— գանձ, Խ. խհրիսիու— վոսկու):

— Ա՛ռ կեսը և լսիր,— ասաց Քսանթոսը հուսահատված:

— Դու չես տվողը, այլ տերը. մտիկ արա՝ Ա. Անեւոմենի— առեք, Վ. վատիսանտես— գնացեք, Տ. տիեկեսթե— բաժանեցեք, Ռ. ոն—ինչ, Ե. եվրեդե— գտար (Թ. թիսավրոն— գանձ, Խ. խհրիսիու— վոսկու):

— Գնանք տուն և ամեն ինչ բաժանենք,— ասաց Քսանթոսը:

Բայց յերբ տուն հասան, նա հանկարծ վախեցավ, վոր Յեղովպոսը գաղտնիքը յերևան կհանի և հրամայեց նրան բանտ տանել:

— Ա՛յսպես են կատարում փրկսոփաներն իրենց խոստումը,— հարցրեց Յեղովպոսը Քսանթոսին, յերբ լսեց այս հրամանը:

Քսանթոսն, ամաչելով իր վարմունքից, հրամանը փոխեց:

— Այժմ ինչ ուզում ես արա, — ասաց Յեզովպոսը, բայց պիտի դա ժամանակի, յերբ դու ինձ ահամա պիտի աղատես:

ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Ե

Այդ որերին Սամոս կղզում մի զարմանալի դեպք պատահեց: —

Մի արծիվ, տերության մատանին թափավորի սեղանից վերցնելով, տարավ մի ծառայի գոգնոցի մեջ դրեց:

Ժողովուրդը Քսանթոսի մոտ յեկավ և, վորպես իմաստունի, նրանից խնդրեց այս խնդիրը լուծել:

Քսանթոսը շատ տխրեց: Նա վախենում էր, վոր չը կարողանա լուծել և դրանով իր վարկն ընկնի:

— Տեր, ասաց Յեզովպոսը, — զնացե՞ք և սամոսցիներին ասացե՞ք, վոր դուք փրկիստփա եք և Ձեր գործը չե հրաշքներ մեկնել ու գուշակություններով զբաղվել, բայց դուք ունեք մի ծառա, վոր կարող է նրանց փափագին գոհացում տալ: Յեվ Ձեր խոնարհ ծառան, տեր իմ, այդ հանելուկը կլուծե: Յեթե կարողանամ՝ այդ դեպքում ամբողջ պատիվն ընկնելու յե Ձեր վրա, այնպես, ինչպես չկարողանալու դեպքում՝ պարսավանքն իմ վրա:

Քսանթոսը համաձայնեց:

Յերբ Յեզովպոսը ներկայացավ ժողովրդին՝ բոլորն սկսեցին ծիծաղել:

— Այս ալլանդակ մարդն է, վոր մեր հանելուկը պիտի լուծե, — ասում էյին նրանք:

— Ո՛վ սամոսցիք, — խոսք վերցրեց Յեզովպոսը, — պետք է նայել մարդու խելքին ու հոգուն, վոչ թե ֆի-

զիկահանին, — շնի ձեփն և ձեզ հետաքրքրում, թե բովանդակությունը:

Ծիծաղները դադարեցին, Յեզովպոսը քաջալերված շարունակեց.

— Յես այժմ մի դժբախտ դերի յեմ և միսչե ինձ չազատեք իմ տիրոջ ձեռքից՝ չեմ կարող ձեր հանելուկը լուծել, վորովհետև իմ տերը նախանձից ինձ պիտի ծեծի:

Ժողովուրդը Քսանթոսից խնդրեց ազատ արձակել իր ծառային, բայց նա չպատասխանեց: Այն ժամանակ դատավորն ասաց.

— Քսանթոս, յեթե դու նրան քո հոժար կամքով չազատես՝ յես կազատեմ իմ իշխանությամբ:

— Ազատում եմ, — պատասխանեց Քսանթոսն ահամա, — և այսպես կատարվեց Յեզովպոսի առաջին գուշակությունը:

— Ինչպես հայտնի յե, — իր բացատրությունն ընկրսեց Յեզովպոսը, — արծիվը թռչունների թագավորն է, իսկ նրա մատանի փախցնելը նշանակում է, վոր ժամանակակից թագավորներից մեկը ցանկանում է ձեր մեջ խռովություն ստեղծելով կործանել ձեր յերկիրը, տիրանալ նրան:

Ամբողջ ժողովուրդը սարսափեց: Մի քանի որ հետո մի գրություն ստացվեց լյուդացոց Կրեսոս թագավորից, վորով նա հրամայում էր կամ համաձայնել ամեն տարի իրեն վարող տուրք վճարել, կամ պատրաստվել պատերազմի:

Սամոսցիներն անմիջապես Յեզովպոսի մոտ յեկան և խորհուրդ հարցրին նրան: Յեզովպոսը պատասխանեց.

— Յերկու միմյանց հակառակ ճանապարհներ կան. առաջինն է՝ ազատությունը, վորի սկիզբը դժվար է ու խիստ, բայց վերջը՝ հեշտ ու զվարճալի: Յերկրորդը՝ սարքկության ճանապարհն է, վորի սկիզբը հեշտ է ու հանգիստ, բայց վերջը՝ դժվար ու տանջալի: Ընտրեցե՛ք:

ժողովուրդը պատասխանեց.

— Մենք առաջին ճանապարհն ենք ընտրում, յերբեք տուրք չենք տա թագավորին:

ԱՌԱՋԻՆ ԱՌԱԿԸ

Կրեստոսի դեսպանը վերադարձավ պալատ և պատմեց տեղի ունեցածը:

Կրեստոսը հրամայեց պատերազմի պատրաստվել, բայց դեսպանը պատասխանեց.

— Չեմ կարծում, վոր դու կարողանաս սամոսցիներին հաղթել, վորովհետև նրանց մոտ կա Յեզովպոս անուով մի խորամանկ մարդ, վորին սիրում ու հարգում են նրանք և աշխարհում չկա մի բան, վորի տակից չկարողանա նա դուրս գալ: Իմ խորհուրդն այն է, վոր սամոսցիներին Յեզովպոսն ուղես և ղրա փոխարեն խոստանաս ուղարկել հաշտության զիր ու մեծ նվերներ: Առայժմ մոռացիր պատերազմը, իսկ յերբ Յեզովպոսն ստանաս՝ կստանաս նաև հաղթանակը՝ առանց վորևե դժվարության:

Կրեստոս արքան համաձայնեց այս խորհրդին և իր դեսպաններն ուղարկեց Սամոս:

Յեզովպոսն անմիջապես հասկացավ նրանց նենդ դիտավորությունն ու ասաց.

— Ո՛վ ժողովուրդ Սամոսի, ինձ համար մեծ պատիվ է Կրեստոսի մոտ գնալը, բայց նախքան այդ՝ լսեցեք մի առակ.

«Հին, խաղաղ ժամանակներում, գայլերը պատերազմ հայտարարեօին վոչխարներին և յերբ հարձակվեցին՝ հանկարծ մեջտեղ ընկան շները և պաշտպան հանդիսացան վոչխարներին: Այն ժամանակ գայլերը դեսպան ուղարկեցին վոչխարներին ու դեսպանն ասաց.

— Մեր ցեղը ցանկանում է խաղաղության դաշն կապել ձեզ հետ, այն պայմանով, վոր դուք, վորպես պա-

տանդ, մեզ հանձնեք շներին: Վոչխարներն համաձայնվեցին և հենց վոր հանձնեցին շներին՝ վրա հասան գայլերը և պատառ-պատառ արեցին բոլոր վոչխարներին»:

Սամոսցիք լավ հասկացան առակի միտքը և չուղեցին թույլ տալ, վոր Յեզովպոսը գնա, բայց նա չհամաձայնվեց մնալ և ճանապարհ ընկավ դեպի Կրեստոսի պալատը:

ՅԵՐԿՐՈՐԴ ԱՌԱԿԸ

«Միթե այս այլանդակ, գոեհիկ մարդն է ինձ արգելք հանդիսացող այդ գեղեցիկ կղզուն տիրելու» — մըտածեց Կրեստոս, յերբ Յեզովպոսը ներս մտավ:

— Ո՛վ մեծ արքա, — ասաց Յեզովպոսը, — ինձ վոչ վախը ղրդեց այստեղ գալու, վոչ էլ բռնությունը, այլ իմ ազատ կամքը: Ներիր ինձ, վոր մի քանի խոսք ասեմ քեզ, բայց առաջ թույլ տուր մի առակ պատմեմ.

«Մի մարդ մորեկ էր բռնում և սպանում. մի անգամ էլ նա պատահաբար մի ճպուռ բռնեց: Յերբ ճպուռը յենթադրեց, վոր իրեն էլ պիտի սպանի՝ ասաց. — Խնդրում եմ ինձ մի սպանիր, վորովհետև յես վոչ ցորեն եմ փչացնում, վոչ էլ մի այլ փուս տալիս վորևե մեկին: Յես վոչինչ չունեմ բացի իմ ձայնից, վորով յերգում ու զվարճացնում եմ մարդկանց: Յերբ մարդն այս խոսքերը լսեց՝ նրան ազատ թողեց, վոր իր գործին գնա»:

— Ո՛վ մեծ թագավոր, ահա յես քո առաջ կանգնած, խնդրում եմ ինձ չմեռցնես, յես վոչ-վոքի վատություն չեմ արել, իմ միակ հանցանքն այն է, վոր կեղծավորություն չեմ անում և համարձակ եմ խոսում: Թեև իմ մարմինն այլանդակ է և յես ֆիզիկապես անարդ եմ յերևում, բայց իմ խոսքերը յերբեք անարդ չեն:

Արքան պատասխանեց.

— Յեզովպոս, քեզ վոչ միայն կյանք եմ շնոր-

հում, այլ արտոնութիւն՝ ինձանից խնդրելու ամէն, ինչ ցանկալի յե քեզ:

— Ո՛վ արքա, խնդրում եմ, վոր հաշտվես սամոսցիներին հետ:

— Համաձայն եմ, — պատասխանեց Կրեսոս արքան:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Յեզովպոսը բավական մնաց Կրեսոսի պալատում. նա այնտեղ գրեց իր առաջին առակները և նվիրեց արքային. արքան ուրախութեամբ ընդունեց այդ նվերը և, վորպես շնորհակալիք, նրա ձեռքը տվեց մի հրովարտակ, վորի մեջ գրված էր.

«Յես, Կրեսոս, արքա լյուդացոց, շնորհիվ Յեզովպոսի թախանձանքներին, հաշտութեան հրովարտակ եմ հղում սամոսցիներին»:

Կրեսոս, արքա լյուդացոց:

Սամոսցիք ծաղկեպտակներով ընդունեցին Յեզովպոսին և, ի պատիվ նրա, սարքեցին մեծ հանդեսներ:

— Ահա Ձեր ինձ շնորհած ազատութեան փոխարինումը, — ասաց Յեզովպոսը և արքայի ձեռքը դրեց խաղաղութեան հրովարտակը:

Ապա իր քայլերն ուղղեց դեպի Բաբելոն, ուր, շնորհիվ նրա իմաստութեան համբավի, մեծ սիրով նրան պալատ հրավիրեց Բաբելոնի արքան՝ Լիզերոսը:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԱՀ

Յեզովպոսը, մենակութիւնից ձանձրացած՝ վորդեգրեց մի վորք տղա, վորի անունն էր Յեննոս:

Յեննոսը Յեզովպոսի տանը շարունակ անկար-

գութիւններ եր անում, այդ պատճառով Յեզովպոսը վրտարեց նրան:

Յեննոսը, վորն պահելով Յեզովպոսից, գնաց Թագավորի մոտ և զպարտանքներ նետեց Յեզովպոսի հասցեյին:

Թագավորը հաժապեց Յեննոսի ներկայացրած կեղծ փաստերին ու հրամայեց սպանել նրան:

Սակայն Թագավորի այն պաշտոնյան, վորին հանձնարարվել էր այդ գործը, խղճաց Յեզովպոսին և, փոխանակ սպանելու, Թագորեց գերեզմանատանը:

Հին ժամանակ Թագավորները սովորութիւն ունեցին միմյանց զանազան խրթին առակներ և հանելուկներ առաջարկել. ով չկարողանար իրեն առաջարկվածի ճիշտ պատասխանը տալ՝ յենթարկվում էր դրամական տույժի:

Լիզերոս Թագավորը, շնորհիվ Յեզովպոսի, մեծ գումարներ եր շահում:

Յերբ յեգիպտացիների Նեգդեմաբոս Թագավորը լսեց Յեզովպոսի մահը, Լիզերոս Թագավորին առաջարկեց Յեգիպտոս ուղարկել մի քանի սրամիտ մարդիկ, վորոնք կարողանային շինել այնպիսի մի աշտարակ, վոր վոշ յերկրին կպչեր և վոշ յերկնքին: Առաջարկվեց ուղարկել նաև մի սրամիտ մարդ, վոր կարողանար լուծել իրեն առաջարկված բոլոր հանելուկներն ու առակները:

Այն պահին, յերբ Լիզերոսը, Թագված խոր տրլութեան մեջ, անկեղծորեն զղջում էր Յեզովպոսի նկատմամբ արձակած դաժան հրամանի համար՝ դուռը մեղմորեն ճռուց և... ներս մտավ Յեզովպոսը:

Մեր որերում չեն հավատում մահացածի հարութիւն անելու կարողութեան, բայց այն ժամանակ հավատում էին:

— Այս ի՞նչպես պատահեց, վոր դու կարողացար հարութիւն անել, — հարցրեց Թագավորը մի ձայնով,

վորի մեջ զգացվում եր և՛ զարմանք, և՛ սարսափ, և՛ ուրախութիւն:

— Յես կարողացա հարուստ լինել, տեր իմ, նրա համար, — պատասխանեց Յեզովպոսը, — վոր յերբեք չեյի մահացել:

Դիչ հետո, յերբ անցան թագավորի զարմանքն ու սարսափը, նա պատմեց իր վիշտը Յեզովպոսին:

— Յես այդ գիտեյի, տեր իմ, յես գիտեյի, վոր դուք նեղն ընկնելու ժամանակ ինձ կհիշեք՝ և այդ եր պատճառը, վոր համարձակվեցի Ձեզ ներկայանալ:

Թագավորն ամաչեց Յեզովպոսի խոսքերից:

— Վոչինչ, — զարձյալ խոսք վերցրեց Յեզովպոսը, — ել իզուր մի անհանգստանաք և նեղգենաբոսին պատասխանեցեք, վոր յերբ ձմեռն անցնի, իր բոլոր ցանկութիւնները կկատարվեն:

ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Յեզովպոսը ճարեց արծփի չորս ձագ և նրանց սովորեցրեց այնպէս, վոր յերբ նրանց յուրաքանչյուր թևից կախելին մի-մի զամբլուղ և մեջը դնելին մեկական յերեխա՝ նրանք կատարելին յերեխաների բոլոր ցանկութիւնները:

Գարնանը, Յեզովպոսն ու յերեխաները արծիվների թևերից կախված՝ գնացին Յեզիպոս:

Նեղգենաբոսը շատ զարմացավ տեսնելով Յեզովպոսին, վորին ինքը մեռած եր կարծում:

Այս նա պալատականներին հրամայեց սպիտակ զգեստներ հագնել, իսկ ինքը կարմիր հագավ:

— Խնչ բանի ես նմանեցնում ինձ և իմ պալատականներին, — հարցրեց նա:

Յեզովպոսը պատասխանեց.

— Քեզ՝ զարնան արևի, պալատականներիդ՝ հասած ցորենի: Թագավորը ծիծաղեց և հաջորդ ուր պալատականներին հակառակը պատվիրեց, ինքն ել հագավ սպիտակ և կրկնեց իր հարցը:

— Ինչի ես նմանեցնում ինձ և իմ պալատականներին:

— Դու՝ արև, պալատականներդ՝ ճառագայթ:

Թագավորը փքվեց և սկսեց արհամարհել բարեխղճ թագավորութիւնը:

Յեզովպոսը պատասխանեց.

— Տեր արքա, դու քո ժողովրդի համեմատությամբ արև ես, բայց յերբ քեզ համեմատենք Լիզերոսի հետ, այն ժամանակ քո լույսը նրա առաջ կխավարի:

Թագավորը, վիրավորված այս սրամիտ պատասխանից, նշուխտ փոխելու համար հարցրեց.

— Բերել ես ճարտարապետներին:

— Այո, տեր արքա, խնդրում եմ ինձ ցույց տաք աշտարակաշինութիւն վայրը:

Թագավորը նրան ծովափ տարավ և ցույց տվեց ընդարձակ տարածութիւնը:

Յեզովպոսը պետք յեղած նախապատրաստութիւնները տեսավ, արծիվները բաց թողեց և յերեխաները, հենց վոր ողբ բարձրացան, մուրճը մուրճին զարնելով ասացին.

— Բերեք մեզ քար, կիր ու ավազ:

— Վերադից բերիր այս թևավոր տղաներին, — հարցրեց թագավորը զարմացած:

— Լիզերոսի թագավորութիւնից, դու ինչպէս ես համարձակվում քեզ համեմատել նրա հետ, — պատասխանեց Յեզովպոսը ժպտալով:

Թագավորը խոստովանվեց, վոր ինքը պարտված եր և նրան առաջարկեց հետևյալ հանելուկը.

ՅԵԳԻՊՏԱԿԱՆ ՁԻ ՅԵՎ ԲԱԲԵԼԱԿԱՆ ԱՔԱՂԱՂ

«Յես ունեմ մի եղ ձի, վոր յերբ Բաբելոնի արու ձիերք ձայնն ե լսում՝ հղիանում ե, ինչն ե պատճառը»:

— Մի որ ինձ ժամանակ տուր և յես կլուծեմ,— պատասխանեց Յեզովպոսը:

Հաջորդ որը նա իր ծառաներին պատվիրեց մի կատու վերցնել և ծեծելով բոլոր փողոցներում պատեցներ: Ծառաները նրա պատվերը կատարեցին:

Կատուն Յեզիպոսում համարվում եր սուրբ կենդանի և յեզիպոսցիւ պաշտում եյին նրան:

Յերբ թագավորն այս «սրբապղծության» պատճառը հարցրեց՝ Յեզովպոսը պատասխանեց.

— Յես նրան ծեծել տվեցի այն պատճառով, վոր նա այս գիշեր Բաբելոն գնաց և լափեց թագավորի լավագույն արագաղը:

— Ինչո՞ւ ես սուտ խոսում, Յեզովպոս,— ասաց թագավորը նրան,— ինչպես կարող ե կատուն մի գիշերվա մեջ Բաբելոն գնալ-գար:

— Յեթե քո ձիերը Բաբելոնի ձիերի ձայնը կարող են լսել այդքան հեռավորությունից և հղիանալ, ապա ինչո՞ւ դու այս բանն անհնար ես համարում,— պատասխանեց Յեզովպոսը:

ՎԵՐԱԴԱՐՁ

Յեզիպոսական թագավորը վախենալով, վոր հանկարծ Յեզովպոսի սրամիտ առաջարկների պատճառով կարող ե պարտքերի տակ ընկնել՝ իր պալատականներին առաջարկեց գտնել ախպիսի մի մեջ, վորով հնարավոր լինեք Յեզովպոսին պարտության մատնելով իր հայրենիքը վերադարձնել:

Հաջորդ որը պալատականները Յեզովպոսին առաջարկեցին գտնել ախպիսի մի հանելուկ, վոր իրենք լսած չլինեյին:

Յեզովպոսը հասկանալով, վոր նրանք մտադիր են իր բոլոր հարցերին «իմանում ենք» և «լսել ենք» պատասխանել, վերցրեց մի թուղթ և գրեց.

«Յես, Նեգդենաբոս, արքա յեզիպոսացոց, Բաբելոնի արքա Լիզերոսին պարտավոր եմ հազար տաղանդ*) վերձարել»:

Յերբ Յեզովպոսը գրությունը ցույց տվեց նրանց՝ նրանք առանց կարդալու պատասխանեցին, վոր իմանում են:

— Յես շատ ուրախ եմ, վոր դուք գրանով ակամա խոստովանվում եք, թե Նեգդենաբոսը պարտավորվում ե հազար տաղանդ վճարել Լիզերոսին,— այս ասելով Յեզովպոսը նրանցից մեկին հանձնարարեց բարձրաձայն կարդալ գրվածը: Ընթերցումից հետո նրանք հայտարարեցին, վոր աչպիսի բան բոլորովին չեն լսել:

— Հենց այս խոստովանությունն եյի յես ցանկանում,— պատասխանեց Յեզովպոսը:

Յերբ Նեգդենաբոս թագավորն այս յեղեղությունը լսեց, ասաց.

— Լիզերոսը շատ յերջանիկ ե այսպիսի մի հպատակ ունենալու համար:

Ապա նա հրամայեց Յեզովպոսին վճարել հանելուկի համար խոստացված գումարը և բարեկամական սիրով ճանապարհ գցեց նրան դեպ իր լերկիրը:

Բաբելոնում Յեզովպոսն արքային պատմեց բոլոր պատահածները և նրան տվեց իր շահած գումարները, իսկ Լիզերոսը, վորպես յերախտաղիտության նշան, հրամայեց կանգնեցնել Յեզովպոսի փոսկե արձանը:

*) Հին ժամանակվա փող:

ՅԵՁՈՎՊՈՍԻ ՄԱՀԸ

Յեզովպոսը, խոստանալով, վոր շուտով կվերադառնա, թագավորից արտոնություն խնդրեց վորոշ ժամանակով այլ քաղաքներ այցելության գնալու:

Թագավորը համաձայնեց և Յեզովպոսը ճանապարհ ընկավ դեպի Դեղոս կղզին, ուր գտնվում էր Հունաստանի մեծագույն աստվածներից մեկի, Ապոլլոնի արձանը:

Կղզու բնակիչները չկարողացան Յեզովպոսի արժանիքը հասկանալ և Յեզովպոսը, վերավորված, մի որ ասաց.

— Ո՛վ Դեղոսցիք. յես ձեզ նմանեցնում եմ ծովի վրա գտնվող մի փայտի, վոր հեռվից մի մեծ բանի տպավորություն է թողնում, իսկ յերբ մոտենում ես նրան՝ տեսնում ես, թե վորքան չնչին բան է նա:

— «Յես ել հեռվից ձեզ հարգում, մի մեծ բան եյի կարծում, իսկ այժմ տեսնում եմ, թե վորքան չնչին մարդիկ եք դուք:

Դեղոսցիք վախենալով, վոր նա իր բացասական կարծիքը կհայտնե նաև այլ քաղաքներում՝ վորոշեցին վորոն հանցանքով ամբաստանել նրան և մահապատիժ պահանջել:

Հաջորդ որը, յերբ նա պատրաստվում էր հեռանալ քաղաքից, նրան մեղադրեցին գողության և սրբապղծության մեջ:

Յերբ Յեզովպոսը փորձում էր իր անձն արդարացրնել՝ ամբոխը թափվեց նրա իրերի վրա և «գտավ» մի վոսկե բաժակ, վոր պատկանում էր Ապոլլոնի տաճարին: Այդ բաժակն իրենք եյին դրել նրա իրերի մեջ:

Մի որվա բանտարկւթյունից հետո Յեզովպոսին բարձրացրին մի մեծ ժայռի վրա և, չլսելով նրա հուզիչ թախանձանքներն ու փոխաբերաբար պատմած մի շարք առակները՝ ցած գլորեցին ժայռից:

Ամբողջ Հունաստանը, բացի կույր ու տգետ Դեղոսից, վողբաց իր մեծ վորդու մահը:

Վորոշ ժամանակից հետո Դեղոսն զգաց իր սխալը և մի վոսկե արձան կանգնեցրեց Յեզովպոսի հիշատակին, բայց այդ արձանը չեւ կարող մեծ փիլիսոփային ու առակախոսին հարություն տալ:



	ԿՁ
Յերկու խոսք	2
1. Քղերը	3
2. Առաջին վաճառք	5
3. Յերկրորդ վաճառք	6
4. Ծանոթութիւն	9
5. Վոսպ և խոզի վոտք, կամ քերականութիւն և մաթե- մատիկա	10
6. Լիզունները	13
7. Բարը	14
8. Տգետ փիլլոսփաներ	15
9. Խորհրդավոր տառեր	16
10. Գուշակութիւնը կատարվում է	18
11. Առաջին առակը	20
12. Յերկրորդ առակը	21
13. Խաղաղության հրովարտակը	22
14. Ժամանակավոր մահ	22
15. Աշտարակաշինութիւն	24
16. Յեզիպտական ձի և բաբելական աքաղաղ	26
17. Վերադարձ	26
18. Յեզովպոսի մահը	28

Պատ. խմբագիր՝ Հր. Քոչար
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբազրիչ՝ Ս. Փարսադանյան

Գլավիտի լիազոր՝ Բ—1056 Հրատ. 5147.

Պատվեր 88. Տիրաժ 4000.

Թուղթ 62×94. Տպագրակ. 2 մամուլ.

Մեկ մամուլում 24480 նշան.

Հանձնված է արտադրության 21 հունիվ. 1940 թ.

Ստորագրված է տպագրության 21 փետրվարի 1940 թ.

Հայպետհրատի 1 տպարան, Յերեան, Լենինի, 65.

ՀՀ Ազգային գրադարան



NL0315636

9162 70 4.

ЖИЗНЬ ЕЗОПА
СОСТАВИЛ У. ХАНДАМУР
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.

